



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 95-Ա

12. ՄԱՅԻՍԻ 2023Թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 5-Ի ԹԻՎ 04 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Հանրային ծառայության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով՝ «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 5-րդ կետով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 20-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» N 737-Ն որոշմամբ. ՀՀ վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի 1550-Լ որոշմամբ հաստատված /հավելված N9/ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կանոնադրության 19-րդ կետի «19»-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2023 թվականի ապրիլի 28-ի թիվ 99 հրամանը.


Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի 2023 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն հավելվածի:

2. 2023 թվականի մայիսի 12-ից ուժը կորցրած ճանաչել Վայոց ձորի մարզպետի 2023 թվականի հունվարի 5-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի 2023 թվականի հաստիքացուցակը հաստատելու մասին» թիվ 04 որոշումը:

3. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2023 թվականի մայիսի 12-ից գործող իրավահարաբերությունների վրա:

5/12/2023


ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ք.Եղեգնաձոր

